ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ ՍՈՍԻ

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԹՈՒՐՔ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ (20-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Է. 00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Ավագյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա.Ա. Խառատյան

պ.գ.թ., պրոֆեսոր Ա. Վ. Սաֆարյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հունիսի 10-ին, ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող, 24/4, 11-րդ հարկ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. մայիսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար պ.գ.թ. Գ. Ա.Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

.**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Բուլղարիայի թուրք փոքրամասնության պատմական զարգացման առանձնահատկությունների, հիմնախնդիրների, հասարակական-քաղաքական գործընթացների համակողմանի ուսումնասիրությունն ունի գիտական և կիրառական նշանակություն: Թեմայի համակողմանի վերլուծությունն արդիական է ոչ միայն ուսումնասիրվող ժամանակաշրջանում թուրք փոքրամասնության հետ կապված Բուլղարիայում ծավալված գործընթացների լուսաբանման, բուլղարաթուրքեր-Թուրքիա կապը, թուրք-բուլղարական հարաբերությունները համարժեքորեն գնահատելու, այլև երկրում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի ուսումնասիրման տեսանկյունից: Աշխատանքի առանցքում ընկած է 20-րդ դ. երկրորդ կեսին ու 21-րդ դ. սկզբին բուլղարաթուրքերի կարգավիճակում տեղի ունեցող փոփոխությունները: Աշխատանքում մեծ տեղ է հատկացված թուրք փոքրամասնության քաղաքական ակտիվությանը, որը որոշ առումով պայմանավորված է նաև Թուրքիայի կողմից բուլղարաթուրքերի շրջանում տարվող աշխատանքների հետ:

Բուլղարաթուրքերը՝ որպես անկախ Բուլղարիայի ազգային փոքրամասնություն, ձևավորվել են աստիճանաբար՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից և 1908 թ. Բուլղարիայի անկախության ձեռքբերումից հետո: Բուլղարիայի թուրք փոքրամասնություն եզրույթը կարելի է համարել բավականին ընդհանրացված, քանի որ այն իր մեջ ներառում է նաև թաթարների, գագաուզների, չերքեզների:

Ներկայումս Բուլղարիայում բնակվում է շուրջ 600. 000 թուրք (Բուլղարիայի բնակչության մոտավորապես 10%-ը), որոնք ակտիվ քաղաքական, տնտեսական և մշակութային գործունեություն են ծավալում: Հիմնականում բուլղարաթուրքերը ներթափանցել են երկրի քաղաքական կյանք թուրքական Իրավունքների և ազատությունների շարժում (հետայսու՝ ԻԱՇ), (բուլղ.՝ Движение за права и свободи - ДПС, թուրք.՝ Hak ve Özgürlükler Hareketi, HÖH) կուսակցության միջոցով, որի ավելի քան երեք տասնյակ անդամներ Բուլղարիայի օրենսդիր մարմնի պատգամավորներ են: Վերջին խորհրդարանական ընտրությունների (2013 թ.) արդյունքում ընտրվել է 36 թուրք պատգամավոր:

Բացի այդ, 1980-ական թթ. վերջերից Անկարայի կողմից բուլղարաթուրքերի ուղղությամբ աշխատանքի ակտիվացում է նկատվում: Միաժամանակ հետխորհրդային ժամանակաշրջանում նկատելի է Բուլղարիայի և Թուրքիայի միջև հարաբերությունների շեշտակի բարելավում: Թուրքիայի հետ խորանում են ինչպես երկկողմ քաղաքական ու տնտեսական հարաբերությունները, այնպես էլ գործակցությունը ՆԱՏՕ-ի շրջանակում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է համակողմանի ուսումնասիրել և գնահատել 20-րդ դարի երկրորդ կեսի և 21-րդ դարի սկզբներին Բուլղարիայի թուրք փոքրամասնության վիճակը,

վերջինիս նկատմամբ բուլղարական իշխանությունների վարած քաղաքականությունն ու ունեցած դիրքորոշումը, ինչպես նաև բացահայտել բուլղարաթուրքերի հասարակական-քաղաքական կյանքում Թուրքիայի ունեցած դերակատարումը: Նկատի ունենալով ուսումնասիրվող թեմայի լայն ու բազմակողմանի բնույթն ու ընդգրկունությունը՝ աշխատանքը սահմանափակվում է բացառապես հետևյալ խնդիրների առաջադրմամբ.

- լուսաբանել Բուլղարիայի անկախացումից հետո օսմանյան տիրապետության շրջանում իշխող դիրքերում գտնվող տեղացի թուրքերի փոքրամասնության կարգավիճակում հայտնվելը և վերջիններիս նկատմամբ բուլղարական իշխանությունների դիրքորոշումը,
- ներկայացնել 1946 թ. Բուլղարիայում սոցիալիստական կարգերի հաստատումից հետո երկրի կառավարության՝ թուրք փոքրամասնության նկատմամբ որդեգրած քաղաքականությունը, բուլղարաթուրքերի կարգավիճակը և հիմնախնդիրները,
- ուսումնասիրել Բուլղարիայի կոմկուսի առաջնորդ Տոդոր Ժիվկովի կառավարման ժամանակահատվածում՝ 1970-1980-ական թթ. կեսերին, թուրք փոքրամասնության նկատմամբ իրականացված «բուլղարացման» քաղաքականությունը, դրա պատճառները, նախադրյալները և հետևանքները,
- ուսումնասիրել 1989 թ. Բուլղարիայից Թուրքիա թուրք փոքրամասնության արտագաղթի կազմակերպման պատճառներն ու հետևանքները, ինչպես նաև ներկայացնել թուրքական հասարակության վերաբերմունքը երկիր ներգաղթածների նկատմամբ,
- դիտարկել Բուլղարիայում սոցիալիստական վարչակարգի տապալմանը զուգահեռ երկրի թուրք փոքրամասնության կյանքում տեղի ունեցող արմատական փոփոխությունները և Թուրքիայի իշխանությունների կողմից բուլղարաթուրքերի ուղղությամբ իրականացրած աշխատանքները,
- ուսումնասիրության ենթարկել Բուլղարիայում թուրք փոքրամասնության՝ երկրի քաղաքական կյանք ներթափանցելը, հատկապես ներկայացնել երկրում գործող թուրքական ԻԱՇ կուսակցության գործունեությունը և այն նախադրյալները, որոնց շնորհիվ վերջինս կարողացավ կարճ ժամանակահատվածում դառնալ բուլղարաթուրքերի հիմնական քաղաքական հենարանը և Բուլղարիայի հասարակական-քաղաքական կյանքում զբաղեցնել առաջատար դիրքեր,
- ներկայացնել Բուլղարիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագծի շուրջ ընթացած լսումները և ԻԱՇ պատգամավորների՝ փաստաթղթի ընդունման ուղղությամբ ձեռնարկած դիմադրությունը:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայ պատմագրության մեջ առաջինն է, որտեղ փորձ է արվում համակողմանի լուսաբանել Բուլղարիայի թուրք փոքրամասնության պատմական զարգացման ընթացքը և հասարակական-քաղաքական գործունեությունը, ուսումնասիրել քննվող ժամանակաշրջանում

Բուլղարիայի կառավարության դիրքորոշումը և իրականացրած քաղաքականությունը թուրք փոքրամասնության նկատմամբ: Փաստագրական և օտարալեզու հետազոտությունների հենքի վրա փորձ է արվել ներկայացնել, վերլուծել և գնահատել ուսումնասիրվող ժամանակաշրջանի խնդրո առարկա հարցին վերաբերող իրադարձությունները:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 20-րդ դարի երկրորդ կեսից մինչև 21-րդ դարի սկզբնաշրջանը՝ 1946 թ. մինչև 2009 թ. ներառյալ: Ժամանակագրության սկիզբը 1946 թ. է, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անցկացված հանրաքվեի արդյունքներով Բուլղարիան հռչակվեց որպես Ժողովրդական Հանրապետություն, և երկրում հաստատվեցին սոցիալիստական կարգեր: Ժամանակագրությունն ընդգրկում է մինչև 2009 թ. ներառյալ: Նման ժամանակագրության ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2009 թ. Բուլղարիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում թուրքական ԻԱՇ կուսակցությունը կրկին կարողացավ արձանագրել բարձր ցուցանիշ՝ հավաքելով ընտրողների ձայների 14,45%-ը, ինչի արդյունքում Բուլղարիայի խորհրդարանում ստացավ 38 պատգամավորական մանդատ: Դա թույլ տվեց թուրք պատգամավորներին երկրի օրենսդիր մարմնում հաջողությամբ շարունակել պայքարն ընդդեմ Հայոց ցեղասպանության ճանաչման: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ աշխատանքում անդրադարձ է կատարվել նաև 2010 թ. Բուլղարիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին:

Ի հավելումն այս ժամանակաշրջանի՝ խնդրի մասին ավելի խոր պատկերացում տալու նպատակով պատմական ակնարկի տեսքով տրվել է նաև թուրք փոքրամասնության պատմությունը Բուլղարիայի Երրորդ թագավորությունում՝ 1908-1946 թթ.:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքը պատմահամեմատական մեթոդն է, խնդրի հետ կապված տարատեսակ հարցադրումների, ինչպես նաև աղբյուրների և նյութերի համադրման, քննական վերլուծության մոտեցումը, պատմականության և գիտական օբյեկտիվության սկզբունքը: Ատենախոսությունը գրելիս օգտագործվել են նաև պատմագիտական ուսումնասիրման ընդհանուր՝ ժամանակագրական և պատմական պարբերացման մեթոդները:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Սույն ատենախոսության մեջ առաջ քաշված հիմնադրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել թուրքական համայնքների, Բուլղարիայի և Թուրքիայի առանձին հիմնախնդիրների ուսումնասիրության համար: Դրանք կարող են օգտագործվել նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագիտական դասընթացներում, ինչպես նաև ընդհանուր կրթական ծրագրերում, թեմային առնչվող հետագա

հետազոտությունների համար: Ատենախոսության մեջ արծարծված դրույթները կարող են օգտակար լինել պետական համապատասխան գերատեսչությունների ու մարմինների համար՝ քաղաքական մոտեցումների մշակման, ինչպես նաև վերլուծական նյութերի պատրաստման տեսանկյունից:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի նիստում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, երիտասարդ արևելագետների միջազգային գիտաժողովում ներկայացված զեկույցում:

Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն: Աշխատանքը շարադրված է հայերեն, թուրքերեն, ռուսերեն, անգլերեն և բուլղարերեն տարաբնույթ աղբյուրների, գիտական ուսումնասիրությունների, մասնավորապես պաշտոնական փաստաթղթերի, պարբերականների, հայ և օտարազգի հետազոտողների՝ խնդրո առարկա թեմային նվիրված աշխատությունների ու հոդվածների քննական հետազոտության և վերլուծության հիման վրա: Ատենախոսության աղբյուրագիտական հենքն են կազմել Բուլղարիայի նոր և նորագույն ժամանակաշրջանում կնքված միջպետական այն պայմանագրերը, որոնք հանդիսացել են Բուլղարիան Օսմանյան կայսրության տիրապետությունից ազատագրելու իրավական հիմքն ու երկրի ինքնուրույնության երաշխիքը[1]: Արժեքավոր են նաև այն պայմանագրերը, որոնցում հատուկ տեղ էր հատկացված Բուլղարիայի ազգային փոքրամասնություններին[2]: Ատենախոսության թեմայի համալիր ուսումնասիրության համար կարևոր են Բուլղարիայի 1947, 1971 և 1991 թթ. Սահմանադրությունները[3], որոնք թույլ են տալիս լիարժեք պատկերացում կազմել Բուլղարիայի իշխանությունների՝ երկրի թուրք փոքրամասնության նկատմամբ որդեգրած պետական քաղաքականության վերաբերյալ:

Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուրներ են օգտագործվել տարբեր պաշտոնական փաստաթղթեր, տեղեկագրեր ու զեկույցներ, պետական գերատեսչությունների պաշտոնական կայքէջեր: Մասնավորապես

---

[1] **Ключников Ю., Сабанин А.,** Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 1, Москва, 1925.

[2] **Ключников Ю., Сабанин А.,** Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 2, Москва, 1926.

[3]Конституция на Народна Република България, от 06.12.1947, http://www.parliament.bg/bg/18; Конституция на Народна Република България, от 18.05.1971, http://www.parliament.bg/bg/19; Конституция на Република България, http://www.parliament.bg/bg/const

ուսումնասիրության համար կարևորություն են ներկայացնում ԱՄՆ-ի Կոնգրեսի, Բուլղարիայի ներքին գործերի նախարարության փաստաթղթերը[4], միջազգային տարբեր կառույցների զեկուցագրերը[5], «Թուրքական համագործակցության ու զարգացման գործակալության»՝ (Türk İşbirliği ve Kalkinma Ajansi-TİKA) Բուլղարիայում կատարած աշխատանքների վերաբերյալ ամենամյա հաշվետվությունն ու զեկույցը[6]: Աշխատանքի համար բացառիկ նշանակություն ունեն հատկապես Բուլղարիայի ներքին գործերի նախարարության փաստաթղթերը, որոնցում ներկայացված են «բուլղարացման» քաղաքականությունից հետո՝ 1980-ական թթ. վերջին երկրում տիրող իրավիճակը, ինչպես նաև թուրք բնակչության նամակները, որոնք ուղղված էին Թուրքիայում բնակվող իրենց բարեկամներին: Վերոնշյալ սկզբնաղբյուրներից հարկ ենք համարում առանձնացնել նաև Մարդու իրավունքների միջազգային հելսինկյան ֆեդերացիայի՝ թուրք փոքրամասնության վերաբերյալ զեկույցը, որտեղ մանրամասն ներկայացվում են 1878 թ. ի վեր թուրք բնակչության կարգավիճակը, խնդիրները, տարբեր ժամանակաշրջաններում Բուլղարիայի կառավարության դիրքորոշումն ու իրականացրած քաղաքականությունը երկրի թուրք բնակչության նկատմամբ:

Աշխատանքում տեղ գտած Բուլղարիայի Ազգային ժողովի պաշտոնական կայքը կարևոր է հատկապես Բուլղարիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացն ու դրա դեմ թուրքական ԻԱՇ կուսակցության պայքարն ուսումնասիրելու տեսանկյունից[7]: Բուլղարիայի խորհրդարանական լսումների, քննարկումների ուսումնասիրության արդյունքում նկատելի են Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում ինչպես դրական մոտեցումն ու դիրքորոշումը, որոնք առկա են բուլղարական մի շարք քաղաքական կուսակցությունների և շատ գործիչների մոտ, այնպես էլ Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ ԻԱՇ կուսակցության պատգամավորների կատաղի և անզիջում պայքարը:

Թուրքական ԻԱՇ կուսակցության գաղափարախոսության և

---

[4] A Concurrent Resolution Condemning the Brutal Treatment of, and Blatant Discrimination against the Turkish minority by the Government of the People's Republic of Bulgaria, S. Con. Res 46-101st Congress (1989-1990), https://www.congress.gov/bill/101st-congress/senate-concurrent-resolution/46; Писмата на български турци преди, "Голямата екскурзия": Живеем тежко и безнадежно, документи-МВР, http://desebg.com/2011-01-13-09-25-08/1669-2014-01-27-11-39-02

[5] Minorities in Southeast Europe, Turks of Bulgaria, Center for Documentation and Information on Minorities in Europe - Southeast Europe (CEDIME-SE), http://www.greekhelsinki.gr/english/reports/CEDIME-Reports-Minorities-in-Bulgaria.html; The Human Rights of Muslim in Bulgaria in Law and Politics since 1878, Bulgarian Helsinki Committee, Member of the International Helsinki Federation for Human Rights, Sofia, 2003.

[6] TİKA faaliyet raporu 2008, Ankara, 2008.

[7] http://www.parliament.bg

գործունեության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու նպատակով որպես սկզբնաղբյուր ուսումնասիրվել են կուսակցության կանոնադրությունը և ծրագրային դրույթները[8]:

Աշխատանքի համար առանձնակի կարևորություն է ներկայացնում թուրք հեղինակ Բիլալ Շիմշիրի խմբագրությամբ «Բուլղարիայի թուրքերը միջազգային հաստատությունների փաստաթղթերում» երկհատորյա ժողովածուն[9], որը մեծ մասամբ վերաբերում է 1980-ական թթ. կեսերին թուրք փոքրամասնության նկատմամբ Բուլղարիայի կոմկուսի առաջնորդ Տ. Ժիվկովի իրականացրած քաղաքականությանը: Այստեղ թուրք հեղինակը հավաքագրել է միջազգային տարբեր կառույցների, պետական գերատեսչությունների՝ Բուլղարիայի կառավարության, թուրք փոքրամասնության վերաբերյալ հայտարարություններ, զեկույցներ, բանաձևեր, միջազգային և թուրքական տարբեր պարբերականների լրահոս և այլն: Հարկ է նշել, սակայն, որ Բիլալ Շիմշիրը հավաքագրել է մեծ մասամբ Թուրքիայի դաշնակիցների, խորհրդային կարգերի դեմ հանդես եկող, ինչպես նաև մուսուլմանական երկրների աղբյուրները՝ այդպիսով խնդրի նկատմամբ ցուցաբերելով բացահայտ կողմնակալ մոտեցում, ուստի երկհատորյա փաստաթղթերի այս ժողովածուում տեղ գտած տարատեսակ աղբյուրներն աչքի են ընկնում ավելորդ հուզականությամբ, Բուլղարիայի իշխանության նկատմամբ բացասական վերաբերմունքով և խնդրի նկատմամբ սուբյեկտիվ մոտեցմամբ:

Ատենախոսությունը շարադրելիս լայնորեն օգտագործվել են դեպքերի անմիջական մասնակիցների հուշերը և աշխատությունները[10]: Մասնավորապես, ուսումնասիրության համար մեծ արժեք է ներկայացնում 1983-1989 թթ. Բուլղարիայում Թուրքիայի դեսպանի պաշտոնը զբաղեցնող Օմեր Լյութեմի «Թուրք-բուլղարական հարաբերությունները 1983-1989 թթ.» ծավալուն աշխատությունը, որտեղ հեղինակը անդրադառնում է Բուլղարիայի պատմությանը, մանրամասն վերլուծում թուրք-բուլղարական հարաբերությունները, Բուլղարիայի թուրք փոքրամասնության ներհամայնքային կյանքը, հիմնախնդիրները և հանգամանորեն ներկայացնում 1980-ական թթ. Բուլղարիայի կողմից թուրք փոքրամասնության նկատմամբ իրականացրած քաղաքականության հարցում Թուրքիայի արձագանքը: Իր աշխատանքում թուրք պաշտոնյան ներկայացնում է նաև այդ տարիներին կայացած իր

---

[8] Устав на движение за права и свободи, http://www.dps.bg/images/media/cms_content/USTAV-DPS.pdf; Програмна декларация и решения, приети на VII-та национална конференция на ДПС, http://www.dps.bg/bg/za-dps/programna-deklaratziya.html

[9] The Turks of Bulgaria in International Fora Documents, Vol. I (1985), ed. by **Şimşir B.**, Ankara, 1990; **նույնի՝** The Turks of Bulgaria in İnternational Fora Documents, Vol. II (1986), Ankara, 1990.

[10] **Lütem Ö.,** Türk-Bulgar ilişkileri 1983-1989, Cilt I, 1983-1985, Ankara, 2000; **Konukman E.**, Tarih belgeler işiğinda Büyük göç ve anavatan (nedenleri, boyutlari, sonuçlari), Ankara, 1990.

հանդիպումները Թուրքիայի Հանրապետության վարչապետ Թ. Օզալի, Անկարայում Բուլղարիայի դեսպան Արգիր Կոստանտինովի և այլ պաշտոնյաների հետ, որոնցում մանրամասն քննարկվել են այդ տարիներին Բուլղարիայում տիրող իրավիճակը, թուրք-բուլղարական լարված հարաբերությունները և այլն: Օ. Լյութեմը ևս, ինչպես շատ թուրք հետազոտողներ, խնդրի նկատմամբ ցուցաբերել է կողմնակալ մոտեցում: Այսպես, իր աշխատությունում դեսպանը, անդրադառնալով թուրք փոքրամասնության անվանափոխության խնդրին, նշում է, թե 1980-ական թթ. Բուլղարիայում մեկ մլն. ավելի թուրքեր ենթարկվել են բռնի անվանափոխության, որը սակայն չի համապատասխանում իրականությանը, քանզի ներկայացված ցուցանիշը ուռճացված է: Բացի այդ, թուրք պաշտոնյան, ինչպես նաև շատ թուրք հետազոտողներ, խուսափում է նշել այն փաստը, որ անվանափոխությունը շատ դեպքերում իրականացվել է կամավորության սկզբունքով:

Հայ հեղինակներից սույն աշխատության համար օգտագործվել են Ռ. Սաֆրաստյանի[11], Վ. Բայբուրդյանի[12], Գ. Ղարիբջանյանի[13], Ռ. Կոնդակչյանի[14] աշխատությունները: Աշխատանքի համար մեծ կարևորություն է ներկայացնում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանի ինչպես «Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)», աշխատությունը, այնպես էլ «Թուրքական իշխանությունների հակազդեցությունը 1876 թ. բուլղարական ապստամբությանը. նոր մոտեցում», հոդվածը, որտեղ հեղինակի կողմից առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում այն փաստը, որ առաջին ցեղասպանական բնույթի պետական ծրագիրն ուղղված է եղել բուլղարների դեմ, որպես հակազդեցություն բուլղարական ապրիլյան ապստամբության:

Ատենախոսության մեջ առաջ քաշված հիմնախնդիրների, Բուլղարիայի ներքաղաքական զարգացումների, թուրք փոքրամասնության հիմնախնդիրների, վերջինիս նկատմամբ ինչպես Բուլղարիայի, այնպես էլ Թուրքիայի վարած քաղաքականության համակողմանի ուսումնասիրությանն ու ճիշտ ըմբռնելուն մեծապես նպաստել են հայ հրապարակախոս, թուրքագետ Հայկարամ Նահապետյանի հետազոտությունները[15]:

---

[11] **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, **նույնի**՝ Թուրքական իշխանությունների հակազդեցությունը 1876 թ. Բուլղարական ապստամբությանը. նոր մոտեցում, Արևելագիտության ժողովածու, հատոր V, Երևան, 2004:

[12] **Բայբուրդյան Վ.**, Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011:

[13] **Ղարիբջանյան Գ.**, Ակնարկներ հայ-բուլղարական բարեկամության պատմության, Երևան, 1989:

[14] **Кондакчян Р.**, Внутренняя политика Турции в годы второй мировой войны, Ереван, 1978.

[15] **Նահապետյան Հ.**, Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը, Երևան, 2010, **նույնի**՝ Բուլղարաթուրքեր. Անկարայի 5-րդ շարասյունը, «21-րդ դար» թիվ 1

Ատենախոսությունը գրելիս օգտագործվել են նաև թուրք հեղինակների աշխատությունները՝ ինչպես թուրքերեն, այնպես էլ անգլերեն: Դրանցից կարող ենք նշել Է. Աթասոյի, Օ. Բասքընի, Հ. Բայուրի, Ա. Դայըօղլուի, Բ. Դեմիրթաշ-Չոշքունի, Ս. Լաչիների, Ա. Քարաջովի, Է. Մութլուի և Ս. Քավանոզի, Թ. Չեթինի, Դ. Բարլասայի և Յ. Քյոքսալի, Ռ. Թյումենօղլուի, Ֆ. Սյոնմեզօղլուի և այլոց հոդվածներն ու աշխատությունները[16], որոնք նվիրված են թուրք փոքրամասնության հիմնախնդիրներին, Բուլղարիայի ներքաղաքական կյանքին, թուրք-բուլղարական հարաբերություններին, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին և այլն: 1989 թ. արտագաղթի ուսումնասիրման հարցում կարևորություն է ունեցել հատկապես Ն. Էքիջիի «Բուլղարիայի թուրքական սփյուռքը Թուրքիայում» հոդվածը[17]: Հեղինակը 1989 թ. արտագաղթի վերաբերյալ իր ուսումնասիրությունում ցուցաբերում է մեծ մասամբ անկողմնակալ մոտեցում, քանզի չի խուսափում քննադատել թուրք ներգաղթյալների խնդիրների լուծման հարցում Թուրքիայի կառավարող շրջանակների բացթողումներն ու անկազմակերպ աշխատանքը: Բացի այդ, Ն. Էքիջին իրավացիորեն նշում է, որ 1989 թ. արտագաղթը ոչ միայն Բուլղարիայի կառավարության որոշման, այլև շատ բուլղարաթուրքերի՝ Բուլղարիայից Թուրքիա տեղափոխվելու ցանկության արդյունք էր:

Թեմայի հետազոտության համար առանձնակի կարևորություն են

---

(15), Երևան, 2007, **նույնի**՝ «Բուլղարաթուրքեր. Վերջին զարգացումները», «Նորավանք» ԳԿՀ, 01.03.2010, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4340&sphrase_id=50844

[16] **Atasoy E.**, Asimilasyon kiskacinda Bulgaristan Türkleri, Bursa, 2011; **Baskin O.**, Türk diş politikasi, Cilt 2, 1980-2001, İstanbul, 2002; **Bayur Y.**, Türk inkilâbi tarihi, Cilt 1, kisim 1, Ankara, 1991, **նույնի**՝ Türk inkilabi tarihi, Cilt 2, kisim IV, Ankara, 1991; **Dayioğlu A.**, Toplama kampindan meclise Bulgaristanda Türk ve Müslüman azinliği, İstanbul, 2005; **Demirtaş-Çoşkun B.**, Bulgaristanla yeni dönem, Soğuk Savaş sonrasi Ankara-Sofya ilişkileri, Ankara, 2001; **նույնի**՝ Turkish-Bulgarian Relations in the Post-Cold War Era: The Exemplary Relationship in the Balkans, The Turkish Yearbook, Vol. XXXII, 2001, **Laçiner S.**, Ermeni sorunu, diaspora ve Türk diş politikasi: Ermeni iddialari Türkiye'nin dünya ile ilişkilerini nasil etkiliyor?, Ankara, 2008; **Karadjov A.**, The Turkish Minority in Bulgaria and the "Revival process": The Construction of a Political Minority", Nationalism and Religious Studies, Budapest, 2011; **Mutlu E., Kavanoz S.**, Mother Tongue Education of Turkish Minority in Bulgaria, The Journal of International Social Research, Vol. 3, Issue 14, 2010; **Çetin T.**, Bulgaristandan Türkiyeye son Türk göçünün (1989), Sosyo-ekonomik etkileri, Turkish Studies, International Periodical for the Languages, Literature and History of Turkish or Turkic, Vol. 3, Issue 7, 2009; **Barlasa D., Köksal Y.**, Turkey's Foreign Policy towards Bulgaria and the Turkish Minority (1923–1934), Southeast European and Black Sea Studies, Vol. 14, № 2, 2014.; **Tümenoğlu R.,** Atatürk döneminde Türk – Bulgar ilişkileri ve Bulgaristan Türkleri (1919 – 1938), www.balgoc.org.tr/bilgi/ataturkdonemi.doc; **Sönmezoğlu F**., Türk Diş Politikasinin Analizi, İstanbul, 2001.

[17] **Ekici N.**, The Diaspora of the Turks of Bulgaria in Turkey, www.ibrarian.net/.../The_Diaspora_of_the_Turks_of_Bulgaria_in_Turke...

ներկայացնում թուրք հեղինակներ Բ. Շիմշիրի[18] և Ա. Էմինովի[19] ծավալուն աշխատություններն ու հոդվածները, որտեղ հեղինակները հանգամանալից ներկայացնում են Բուլղարիայի թուրք փոքրամասնության ներհամայնքային կյանքը, Բուլղարիայի քաղաքականությունը թուրք փոքրամասնության նկատմամբ, անդրադառնում բուլղարաթուրքերի կրթական, հոգևոր, մշակութային կյանքին և այլն:

Բուլղարացի հեղինակների աշխատություններից առավել արժեքավոր են Գ. Կոլարովի, Մ. Մաևայի, Ե. Մարուշիակովայի և Վ. Պոպովի, Լ. Պետկովայի, Ռ. Վասսիլևի, Դ. Վասիլևայի, Ա. Ժելյազկովայի և այլոց ուսումնասիրությունները[20], որոնք նվիրված են տարբեր ժամակաշրջաններում բուլղարաթուրքերի ներհամայնքային կյանքին, «բուլղարացման» քաղաքականությանը, 1989 թ. արտագաղթին և այլն: Հարկ է նշել, որ բուլղարացի որոշ հետազոտողներ, ի տարբերություն թուրք շատ հեղինակների, աչքի են ընկնում ուսումնասիրվող խնդիրների վերաբերյալ իրենց անկողմնակալ մոտեցմամբ՝ իրադարձություններին տալով օբյեկտիվ գնահատական:

Սույն աշխատության համար կարևոր է նաև բուլղարացի հեղինակ Դ. Դիմիտրովայի «1989 թ. բուլղարաթուրք ներգաղթյալները Թուրքիայի Հանրապետությունում. ադապտացման և հայրենաբաղձության միջև.

---

[18] **Şimşir B.**, Bulgatistan Türkleri (1878-2008), Ankara, 2009.

[19] **Eminov A.**, The Turks in Bulgaria: Post 1989 Developments, Nationalities Papers, Vol. 27, №1, 1999; **նույնի**՝ Turkish and Other Muslim Minorities in Bulgaria, London, 1997.

[20] **Կոլարով Գ.**, Բուլղարիայի կառավարության անդամները և խորհրդարանի պատգամավորները Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, «Նորավանք» ԳԿՀ, 03.04.2015, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13301; **Maeva M.**, The Revival Process, and its Influence on Bulgarian Turks Identity in Turkey, http://www.balkanethnology.org/files/library/Mila/The_Revival.pdf; **նույնի**՝ Bulgarian Turks and The European Union, http://www.balkanethnology.org/files/library/Mila/Turks%20and%20EU%20Eng.pdf; **նույնի**՝ Българските турци-преселници в Република Турция (Култура и идентичност), София, 2006; **Marushiakova E., Popov V.**, Muslim Minorities in Bulgara, http://www.balkanethnology.org/files/library/E%20&%20V/Muslims.pdf; **Petkova L.**, The Ethnic Turks in Bulgaria: Social Integration and Impact on Bulgarian –Turkish Relations, 1947-2000, The Global Review of Ethnopolitics, Vol. 1, № 4, June 2002, **նույնի**՝ The Integration Process of the Turkish Minority in Bulgaria in The Post-Cold War Era, Budapest, 2002, http://www.kakanien-revisited.at/beitr/fallstudie/LPetkova1.pdf **Vassilev R.**, Post-Comunist Bulgaria's Ethnopolitics, The Global Review of Ethnopolitics, Vol. 1, №2, 2001; **Vasileva D.**, Bulgarian Turkish Emigration and Return, The International Migration Review, Vol 26, № 2, Special Issue: The New Europe and International Migration, New York, 1992; **Zhelyazkova A.,** The Social and Cultural Adaptation of Bilgarian Immigrants in Turkey, http://www.omda.bg/public/imir/studies/nostalgia_1.html; **նույնի**՝ Islamization in the Balkans as a Historiographical Problem: the Southeast-European Perspective, The Ottoman Empire and its Heritage Politics, Society and Economy, Vol. 25, 2002.

բուլղարաթուրքերը Թուրքիայում» հոդվածը, որի հիմք են թուրք ներգաղթյալների շրջանում անցկացված սոցիալական հարցումները և դաշտային աշխատանքը[21]:

Արևմտյան հեղինակներից կարելի է առանձնացնել հատկապես Բ. ԴեԴոմինիկիսի, Դ. Անագնոստուի, Յ. Լանդաուի, Մ. Նեուբուրգերի հետազոտությունները[22]:

Ուսումնասիրության համար օգտագործված աղբյուրների ցանկում մեծ թիվ են կազմում թուրքական և բուլղարական տարաբնույթ պարբերականները, տեղեկատվական և վերլուծական էլեկտրոնային կայքերը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը և գիտական նորույթը, ներկայացվում նպատակն ու խնդիրները, թեմայի ժամանակագրական սահմանների ընտրությունը, մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը և հիմնախնդիրներին վերաբերող օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«ԹՈՒՐՔ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1946-1989 ԹԹ.)»** բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ «***Թուրք փոքրամասնությունը մինչ սոցիալիստական կարգերի հաստատումը***» ենթագլխում պատմական ակնարկի տեսքով ներկայացվում է 1878 թ. Բուլղարիայի ինքնավարության հաստատումից հետո թուրք փոքրամասնության վիճակը, Բուլղարիայի իշխանությունների դիրքորոշումը բուլղարաթուրքերի նկատմամբ, ինչպես նաև վերջինիս և թուրքական իշխանությունների փոխհարաբերությունները: Մասնավորապես լուսաբանվում են 1923 թ. Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո նորաստեղծ քեմալական իշխանության ակտիվ քարոզչական աշխատանքը բուլղարաթուրքերի շրջանում: Արդյունքում 1920-1930-ական թթ. Բուլղարիայում գործում էին տարբեր թուրքական կազմակերպություններ, որոնք զբաղվում էին քեմալիզմի գաղափարախոսության տարածմամբ:

Երկրորդ ենթագլուխը կրում է ***«Թուրք փոքրամասնությունը 1946-1971 թթ.»*** խորագիրը: Այստեղ ներկայացվում է բուլղարաթուրքերի նկատմամբ

---

[21] **Dimitrova D.**, Bulgarian Turkish Immigrants of 1989 in the Republic of Turkey, Between Adaptacion and Nostalgia: The Bulgarian Turks in Turkey, http://www.omda.bg/public/imir/studies/nostalgia_2.html

[22] **DeDominicis B.**, The Bulgarian Ethnic Model: post-1989 Bulgarian Ethnic Conflict Resolution, Nationalities Papers, The Journal of Nationalism and Ethnicity, Vol. 39, № 3, May, 2011; **Landau J. M.**, Pan-Turkism: From Irredentism to Cooperation, Indiana University Press, 1995; **Neuburger M.**, The Orient Within: Muslim Minorities and the Negotiation of Nationhood in Modern Bulgaria, New York, 2004.

Բուլղարիայի սոցիալիստական վարչակարգի որդեգրած քաղաքականությունը, որը ուսումնասիրվող ժամանակաշրջանում իր մեջ ներառում էր ինչպես բարենորոգումների մի ամբողջ համալիր, այնպես էլ սահմանափակումներ:

Երրորդ ենթագլխում, որը վերնագրված է ***«Բուլղարիայի կառավարության քաղաքականությունը թուրք փոքրամասնության նկատմամբ 1970-1980-ական թթ.»*** քննարկվում են այն միջոցառումները, որոնք բուլղարական կառավարությունը ձեռնարկել էր խորհրդային վարչակարգի կողմից առաջ քաշած միասնական սոցիալիստական ազգի ստեղծման գաղափարն իրականացնելու ուղղությամբ, մանրամասն պարզաբանվում են թուրք փոքրամասնության նկատմամբ 1980-ական թթ. կեսերին Բուլղարիայի կոմկուսի առաջնորդ Տոդոր Ժիվկովի իրականացրած «բուլղարացման» քաղաքականության պատճառները, ներկայացվում նախապատրաստման աշխատանքները, ընթացքը, հետևանքները, դիտարկվում Թուրքիայի դիրքորոշումը բուլղարացման քաղաքականության նկատմամբ, ինչպես նաև վերջինիս ազդեցությունը թուրք-բուլղարական հարաբերությունների վրա:

Առաջին գլխի վերջին՝ չորրորդ ենթագլուխը կրում է ***«Բուլղարիայի թուրք փոքրամասնության արտագաղթը 1989 թ.»*** վերնագիրը: 1980-ական թթ. կեսերին իրականացված բուլղարացման քաղաքականության արդյունքում Բուլղարիան հայտնվել էր քաղաքական ճգնաժամի եզրին: Թուրքական խնդրին վերջանականապես լուծում տալու նպատակով իշխանության կողմից որոշում կայացվեց կազմակերպել երկրի թուրք բնակչության արտագաղթը դեպի Թուրքիայի Հանրապետություն: 1989 թ. մայիս-օգոստոս ամիսների ընթացքում Թուրքիա տեղափոխվեցին շուրջ 300.000 բուլղարաթուրքեր, որոնցից շուրջ 150.000-ը սոցիալիստական վարչակարգի տապալումից հետո վերադարձան Բուլղարիա:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է՝ **ԹՈՒՐՔ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1990-2009 ԹԹ.)**: Այն բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ ***«Թուրք փոքրամասնությունը 1990-2000-ական թթ. հասարակական գործընթացներ»*** վերնագրով ենթագլխում ներկայացվում են այն բարեփոխումները, որոնք իրականացվեցին թուրք փոքրամասնության ներհամայնքային կյանքի տարբեր ոլորտներում: Հատկապես ուսումնասիրության են ենթարկվել այն նախադրյալները, որոնք նպաստող գործոն հանդիսացան բարեփոխումների ալիքն իրականություն դարձնելու հարցում:

Երկրորդ՝ ***«Թուրքական «Իրավունքների և ազատությունների շարժում» կուսակցությունը Բուլղարիայի քաղաքական կյանքում»*** ենթագլխում քննության են ենթարկվում թուրքական կուսակցության գաղափարախոսությունը, գործունեությունը, ուսումնասիրվում այն գործոններն ու նախադրյալները, որոնք նպաստեցին, որպեսզի թուրք փոքրամասնության շահերը ներկայացնող կուսակցությունը ժամանակի ընթացքում կարևոր դերակատարություն ունենա Բուլղարիայի ներքին և արտաքին քաղաքական կյանքում:

Երրորդ ենթագլխում՝ ***«Թուրք փոքրամասնության պայքարը Բուլղարիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ»***, հանգամանորեն ներկայացվել և վերլուծության է ենթարկվել Բուլղարիայում Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ հանրային և քաղաքական քննարկումները, երկրի օրենսդիր մարմնում Ցեղասպանության ճանաչման գործընթացը, ինչպես նաև ուսումնասիրվել ԻԱՇ կուսակցության՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ օրինագծի ընդունման դեմ իրականացրած քայլերը:

<u>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ</u> մեջ ամփոփում ենք ատենախոսության հիմնական արդյունքները: Ատենախոսության հիմնահարցերի ուսումնասիրության և նրանց վերլուծության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- 1949 թ. Բուլղարիայի կառավարության կողմից հողի պետականացումը նպաստող գործոն դարձավ երկրի թուրք բնակչության Թուրքիա արտագաղթի համար: Դա Բուլղարիայի կառավարության հետաքրքրությունների շրջանակներում էր, քանի որ մի կողմից հնարավորություն էր տալիս փոքրացնել երկրում թուրքերի թիվը, մյուս կողմից էլ նման եղանակով՝ երկրի թուրք փոքրամասնության շրջանում տարածված կոմունիստական գաղափարները փորձում էր «արտահանել» և տարածել Թուրքիայում:
- Բուլղարիայի կոմկուսի առաջնորդ Տ. Ժիվկովի՝ 1971 թ. Սահմանադրությամբ, օրենսդրորեն սահմանափակվեցին թուրք փոքրամասնության իրավունքները և ճանապարհ հարթեցին 1984 թ. իշխանությունների որդեգրած թուրք բնակչության բուլղարացման քաղաքականության համար: Այն ուներ քաղաքական, ազգային և սոցիալ-հասարակական պատճառներ: Տվյալ ժամանակահատվածում Բուլղարիայում նկատվող թուրք բնակչության թվի աճը կարող էր լուրջ սպառնալիք ներկայացնել երկրի ներքին անվտանգությանը. Բուլղարիան ևս կարող էր արժանանալ Կիպրոսի ճակատագրին, այն է՝ թուրքական միջամտությամբ մասնատում փոքրամասնության իրավունքների պաշտպանության պատրվակով: Այնուամենայնիվ՝ 1980-ական թթ. կեսերին թուրք փոքրամասնության դեմ ուղղված քաղաքականությունը սպասված արդյունքները չտվեց, մասնավորապես, ազգային ինքնագիտակցության հարցում, քանի որ թուրք բնակչությունն այդպես էլ չվերադարձավ իր «բուլղարական արմատներին»: Ընդհակառակը, նկատվեց հակառակ գործընթաց. թուրքերի մոտ ի հայտ եկավ ազգային զարթոնք:
- 1980-ական թթ. վերջերին, «բուլղարացման» քաղաքականության արդյունքում Բուլղարիան հայտնվել էր քաղաքական ճգնաժամի եզրին: Թուրքական խնդրին վերջնականապես լուծում տալու, ինչպես նաև սոցճամբարի պետություններում նկատվող ժողովրդավարական գործընթացներից խուսափելու նպատակով 1989 թ. Բուլղարիայի իշխանությունները կազմակերպեցին թուրք բնակչության արտագաղթ: 1989 թ. հունիս-օգոստոս ամիսների ընթացքում շուրջ 300.000 բուլղարաթուրքեր տեղափոխվեցին Թուրքիա:

1989 թ. բուլղարաթուրքերի արտագաղթը բացասական ազդեցություն ունեցավ Բուլղարիայի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքական կյանքի վրա: Այն լուրջ կորուստ էր երկրի տնտեսության, հատկապես ծխախոտի արդյունաբերության ոլորտում, որը մեծ նշանակություն ուներ Բուլղարիայի արտահանման շուկայում, ինչպես նաև գյուղատնտեսության համար: Բացի այդ, Թուրքիայում ապաստան գտած բուլղարաթուրքերը կարողացան իրենց երկքաղաքացիության շնորհիվ Բուլղարիայի հետագա ընտրություններում ապահովել երկրում գործող թուրքական քաղաքական ուժի ինչպես բարձր ցուցանիշը, այնպես էլ ակտիվ մասնակցությունը երկրի ներքին և արտաքին քաղաքական կյանքին:

- Եթե կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խորհրդային համակարգի քաղաքականությունն առավել փոփոխական ու անկայուն էր, ապա անկախացումից հետո իրավիճակը փոխվում է: 1989 թ. հետո եվրոպականացման ուղին բռնած Բուլղարիան միջազգային պայմանագրերով ստանձնել էր մի շարք պարտավորություններ (մասնավորապես Եվրոպական միությանը անդամակցելու ճանապարհին ստանձնած պարտավորությունները – Վ.Հ.), որոնք վերաբերում էին նաև կրոնական և ազգային փոքրամասնությունների իրավունքներին: Արդյունքում՝ 1990-ական թթ. հետո Բուլղարիայի մուսուլման փոքրամասնությունները ստացել էին բավական լայն իրավունքներ գրեթե բոլոր բնագավառներում՝ ներքաղաքական, քաղաքացիական, կրթական, կրոնական, մշակութային և այլն:
- Թուրք փոքրամասնության հարցում Սոֆիայի իշխանությունների դիրքորոշման փոփոխումը նպաստեց հետխորհրդային ժամանակաշրջանում Բուլղարիա-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը: Երկկողմանի հարաբերությունները զարգանում էին ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ոլորտներում:
- Հետխորհրդային ժամանակահատվածում Բուլղարիայում բնակվող թուրք փոքրամասնությունը ներթափանցել էր երկրի քաղաքական կյանք: 1990 թ. Բուլղարիայի Վառնա քաղաքում գրանցված ԻԱՇ կուսակցությունը ժամանակին փոքրամասնություններին ներկայացնող ազգային հենք ունեցող փոքր կազմավորումից աստիճանաբար վերածվել էր կենտրոնամետ կուսակցության և դարձել բուլղարաթուրքերի հիմնական քաղաքական հենարանը: Խառը ազգային տարածքներում կառավարման բուրգը ամբողջապես կառուցվել էր ԻԱՇ-ի անդամների և աջակիցների կողմից, որոնց զգալի մասը թուրքեր էին: Գործնականում, ԻԱՇ-ն ինքնին ավելի ու ավելի էր վերածվում «պետություն պետության ներսում», քանի որ գործողությունները դուրս էին ազգային ինստիտուտների վերահսկողությունից:

2001-2009 թթ., 8 տարի շարունակ, ԻԱՇ կուսակցությունը երկրի կոալիցիոն կառավարության անդամ է եղել: Վերջինիս հաջողությանը նպաստող հիմնական գործոններն էին բուլղարական ազգայնական կուսակցությունների թուլությունն ու քաղաքական մասնատվածությունը, ինչպես նաև երկրում քաղաքական

դաշտի փոփոխությունները, որից կարողանում էր օգտվել ԻԱՇ-ը՝ մասնավորապես հանդես գալով որպես «միջնորդ-խաղարարար» հիմնական քաղաքական ուժերի հակամարտության ժամանակ: Ներքին պայմաններից բացի, ԻԱՇ-ը կարողանում էր իր օգտին աշխատեցնել նաև արտաքին ազդակները՝ մասնավորապես, ժողովրդավարական գործընթացներում Բուլղարիայի կողմից ստանձնած պարտավորություններն իր օգտին ծառայեցնելով: Միևնույն ժամանակ՝ Թուրքիան ոչ բացահայտ, բայց միևնույն ժամանակ հստակ և կայուն կերպով աջակցում էր ԻԱՇ-ի առաջնորդ Ահմեդ Դողանին և նրա թիմին իրենց գործունեության յուրաքանչյուր փուլում:

- 2000-ականների սկզբից Բուլղարիայում կտրուկ ակտիվացել էր Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, ինչը մեծապես կապված էր «Ատակա» կուսակցության քաղաքականության ակտիվ քայլերի հետ: «Ատակայի» ակտիվ քաղաքականությունն իր ազդեցությունն էր ունենում նաև բուլղարական այլ ուժերի վրա: Միևնույն ժամանակ Հայոց ցեղասպանության ճանաչման փորձերը չսահմանափակվեցին բուլղարական օրենսդիր մարմնում, այլ այդ ուղղությամբ աշխատանք իրականացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների հետ, որտեղ հաջողություններ գրանցվեցին: Այս ընթացքում Թուրքիայի շահերը պաշտպանողի դերակատարումն իր վրա վերցրեց ԻԱՇ կուսակցությունը, որը ոչ միայն համառ պայքարեց Ցեղասպանության ճանաչման դեմ, այլև հայտարարություններով և քայլերով հստակ ցույց տվեց, որ ամբողջովին կիսում է Թուրքիայի Հանրապետության դիրքորոշումը և Բուլղարիայում իրականացնում Անկարայի՝ Ցեղասպանության ճանաչման հարցում որդեգրած քաղաքականությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Բուլղարիայի կառավարության քաղաքականությունը Բուլղարիայի թուրքալեզու փոքրամասնության նկատմամբ 1980-ական թթ., Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Երևան, 2014, № IX-X, էջ 404-411:
2. Բուլղարիայի թուրքական համայնքի ընդհանուր պատկերը 1877-1971 թթ., Հայագիտական հանդես, Երևան, 2015, № 1 (29), էջ 148-156:
3. Բուլղարիայի թուրքական համայնքի վիճակը Բուլղարիայի Հանրապետությունում (1990-2000-ականների սկիզբ), Հայագիտական հանդես, Երևան, 2015, № 2 (30), էջ 153-163:
4. Բուլղարիայի թուրքալեզու փոքրամասնության պայքարը Բուլղարիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ (1995-2010 թթ.), Հայագիտական հանդես, Երևան, 2016, № 1 (31), էջ 127-142:
5. Բուլղարիայի թուրքալեզու փոքրամասնության մեծ արտագաղթը 1989 թ., Կանթեղ, Երևան, 2016, № 1 (66), էջ 87-94:

АКОПЯН ВАГАРШАК СОСОВИЧ

ТУРЕЦКОЕ МЕНЬШИНСТВО БОЛГАРИИ: ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ (ВТОРАЯ ПОЛОВИНА XX в. – НАЧАЛО XXI в.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук
по специальности 07.00.02 - «Всемирная история».
Защита состоится 10-го июня 2016 г., в 15:00 ч. на заседании
специализиронного совета 006, действующего при Институте
востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван,
пр. Маршала Баграмяна 24/4

РЕЗЮМЕ

Диссертация посвящена проблемам турецкого меньшинства Болгарии второй половины XXв. - начала XXIв. и общественно-политическим процессам.

За последнее десятилетие имеет место постепенная активизация живущих зарубежом турецких общин, общинных структур, расширение масштаба лоббистской деятельности. После распада социалистического строя в Болгарии наблюдался ощутимый подъем одного из национальных меньшинств Болгарии – болгарских турок - от статуса угнетенных нацменьшинств к статусу руководящих сил страны, что в международной политической истории может считаться самым удачным примером лоббинга. В силу сказанного диссертационная тема обретает особую актуальность и важность.

Целью диссертации является всестороннее изучение и оценка положения турецкого меньшинства Болгарии во второй половине XXв. - начале XXIв., проводимая болгарскими властями политика и занимаемая ими позиция в отношении турок, а также выявление роли Турции в общественно-политической жизни болгарских турок.

Диссертация состоит из введения, двух глав, которые в свою очередь включают подразделы, из заключения, списка использованных источников и литературы.

Во введении обосновывается актуальность и научная новизна темы, представлены цель и задачи исследования, выбор хронологических рамок темы, методологическая основа, практическое значение работы, краткий обзор использованных источников и литературы.

Первая глава диссертации озаглавлена **«Турецкое меньшинство в Народной Республики Болгария (1946-1989гг.)».** В первом подразделе ***«Турецкое меньшинство до установления социалистического строя»*** в виде исторического очерка представлены положение турок после установления Болгарской автономии в 1878г., позиция болгарских властей в отношении болгарских турок, а также отношения последних с турецкими властями. В

частности, рассматривается активная пропагандистская деятельность среди болгарских турок со стороны кемалистов, пришедших к власти после провозглашения Турецкой республики в 1923г. В результате в 1920-1930-е гг. в Болгарии действовали различные турецкие организации, занимавшиеся распространением идеологии кемализма.

Второй подраздел озаглавлен ***«Турецкое меньшинство в 1946-1971гг.».*** Здесь представлена политика социалистической Болгарии в отношении болгарских турок, которая в рассматриваемый период включала в себя как целый комплекс реформ, так и ограничений.

В третьем подразделе ***«Политика правительства Болгарии в отношении турецкого меньшинства в 1970-1980-х гг.»*** рассматриваются те мероприятия, которые были задействованы болгарским правительством по реализации идеи создания единой социалистической нации, выдвинутой советской системой. Подробно представлены причины политики болгаризации, осуществленной лидером коммунистической партии Болгарии Тодором Живковым в отношении турецкого меньшинства в середине 1980-х гг., подготовительные работы, процесс, последствия, рассмотрена позиция Турции в отношении политики болгаризации, а также влияние болгаризации на турецко-болгарские отношения.

Последний, четвертый подраздел первой главы озаглавлен ***«Эмиграция турецкого меньшинства Болгарии в 1989 г.»***. Политика болгаризации, проводимая в середине 1980-х годов, привела к политическому кризису в Болгарии. С целью окончательного решения турецкого вопроса власти приняли решение об организации эмиграции турецкого населения в Турецкую республику. За май-август 1989 г. в Турцию эмигрировало 300.000 болгарских турок, 150.000 из коих после развала социалистической системы возвратились в Болгарию.

Вторая глава диссертации озаглавлена **«Турецкое меньшинство в Республике Болгария (1990-2009гг.)».** Глава состоит из трех подразделов.

В первом подразделе ***«Турецкое меньшинство в 1990-2000-х гг., общественные процессы»*** представлены те реформы, которые были осуществлены в разных сферах внутриобщинной жизни турецкого меньшинства. Исследованы те предпосылки, которые явились способствующим фактором в вопросе реализации реформ.

Во втором подразделе ***«Турецкая партия «Движение за права и свободы» в политической жизни Болгарии»*** рассматривается идеология турецкой партии, ее деятельность, те факторы и предпосылки, которые способствовали тому, чтобы партия, представлявшая интересы турецкого меньшинства, могла сыграть важную роль во внутренней и внешнеполитической жизни Болгарии.

В третьем подразделе ***«Борьба турецкого меньшинства против***

признания Болгарией Геноцида армян» подробно представлены и проанализированы общественные и политические дискуссии, процесс признания геноцида законодательным органом страны, а также шаги, предпринятые партией «Движение за права и свободы» против признания законопроекта о геноциде армян.

VAGHARSHAK HAKOBYAN

TURKISH MINORITY IN BULGARIA: SOCIAL AND POLITICAL PROCESSES (FROM THE SECOND HALF OF THE 20th CENTURY TO THE BEGINNING OF THE 21st CENTURY)

The defense of the dissertation will take place at 15:00, on the 10nd of the June, 2016 at the meeting of the Specialized Council 006 "World History" at the Institute of Oriental Studies of the NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02

SUMMARY

The dissertation is dedicated to the problems and socio-political processes of the Turkish minority in Bulgaria from the second half of the 20th century to the beginning of the 21st century.

During the last decade gradual activation, lobbying activities, expansion of Turkish communities and addition of community institutions abroad were seen. Taking into consideration the fact of rapid change of depressed state of Bulgarian Turk minority into Bulgaria's ruling party after the collapse of the socialist regime in Bulgaria, which may be considered one of the most successful examples in the history of international political lobbying, makes the topic scientifically important and urgent. The aims of the dissertation was to comprehensively study and objectively assess the situation of the Turkish minority in Bulgaria from the second half of the 20th century to the beginning of the 21st century, the policies and the position of Bulgarian authorities toward them, as well as to identify the role of Turkey in social and political life of a Bulgarian Turk. The dissertation consists of an introduction, two chapters, which are divided into subchapters, conclusion, list of used sources and literature.

The topicality and scientific innovation, aim and objectives, the choice of chronological boundaries of the subject, methodological basis, practical significance and the list of used sources and literature are introduced in an introduction.

The first chapter of the dissertation, which is subdivided into four subchapters, is titled **"TURKISH MINORITY IN THE PEOPLE'S REPUBLIC OF BULGARIA (1946-1989)".** In the first subchapter, which is titled ***"The Turkish minority before the establishment of socialist regime",*** the state of Turkish minority after the establishment of the autonomy of Bulgaria in 1878. Bulgaria's authorities' position on the Bulgarian's Turk, as well as the relationship of Turk authorities is introduced in the form of historical review. Especially illustrated was the active propaganda work among Bulgarian Turks by Kemalist power, which was newly formed after the

proclamation of the Republic of Turkey in 1920 and as a result in 1920-1930 various Turkish organizations were operating in Bulgaria, which was engaged in propagating the ideology of Kemalism.

The second subchapter was titled ***"Turkish minority in 1946-1971".*** This subchapter introduced the adopted policy by Bulgaria's socialist regime towards Turks in Bulgaria, which contains of, both a complex of reforms and restrictions.

In the third subchapter, ***"Bulgarian government policy towards Turkish minority in 1970-1980"***, are discussed towards the actions, which the Bulgarian government has undertaken in order to implement the idea of Soviet regime and to create a socialist nation. This part introduces the political reason of Bulgarian Communist Party Leader Todor Zhivkov towards Turkish minority during the middle of 1980th. Besides of the preparation, as well as is introduced the process, consequence, Turkish attitude to Bulgarian policy and its impact on Turk-Bulgarian relations.

The fourth and last subchapter of the first chapter is titled ***"The emigration of Turkish minority of Bulgaria in 1989."*** The result of the Bulgarian making policies, political crisis arose in the middle of the 1980s. For final solution of the Turkish problem, the authorities decided to organize the migration of Turkish population to the Republic of Turkey. In the months of May to August in 1989 nearly 300 000 Bulgarian Turks moved to Turkey, 150 000 of which returned to Bulgaria after the fall of socialist regime.

The second chapter of the dissertation is titled **"TURKISH MINORITY IN THE REPUBLIC OF BULGARIA (1990-2009)".** It consists of three subchapters.

The first subchapter, which is titled ***"Turkish minority in 1990-2000: Social processes",*** introduces the reforms of the Turkish minority community in different sectors. Those preconditions, which served as a contributing factor in the realization of the reform, were particularly studied.

The second subchapter is titled ***"Turkish "Movement of Rights and Freedoms" political party in the Bulgarian political life".*** This subchapter discusses the ideology of the Turkish political party and its activities. All the factors and conditions were studied, which contributed to the political party representing the interests of the Turkish minority to have an important role in Bulgarian's internal and external politics over time.

The third subchapter is titled ***"The struggle of Turkish minority against the recognition of the Armenian Genocide by Bulgaria".*** Public and political discussions about the recognition of the Armenian Genocide by Bulgaria and by the legislative body and the steps of "Movement of Rights and Freedoms" is analyzed and introduced in details.